Ամերիաբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) «Հրավիրիր ընկերոջդ» արշավի պայմաններ (այսուհետ՝ Արշավ)

1. Բանկի այն հաճախորդները (այսուհետ՝ հրավիրող), որոնք 2026թ. հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ (այսուհետ՝ արշավի գործողություն) «Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագրի շրջանակում MyAmeria հավելվածից «Հրավիրիր ընկերոջդ» ֆունկցիոնալի միջոցով կուղղորդեն Բանկի հաշվետեր հաճախորդ չհանդիսացող այլ ֆիզիկական անձի (այսուհետ՝ հրավիրվող) հեռավար եղանակով դառնալ Բանկի հաճախորդ, բացել հաշիվ և պատվիրել Mastercard Standard տեսակի քարտ (այսուհետ նաև՝ Հաջողված ուղղորդում), հնարավորություն կստանան մասնակցելու Արշավին, որի շրջանակներում՝
    1.1 Հաջողված ուղղորդումների քանակը 5 և ավելի լինելու դեպքում Հրավիրողը կստանա 5000 ՀՀ դրամի չափով խրախուսման վճար (ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը ներառված չեն) յուրաքանչյուր հաջողված ուղղորդման համար Արշավի գործողության ժամկետի ավարտին՝ մինչև **2026 թվականի օգոստոսի 26-ը ներառյալ** «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված իր բանկային հաշվին:
    1.2 Արշավի մասնակցիները՝ Հրավիրողը և Հրավիրվողը՝ մասնակցում են **ուղևորության փաթեթի խաղարկությանը** (այսուհետ նաև՝ Խաղարկություն): Խաղարկության համար նախատեսված պրոմո կոդերը ուղարկվում են մասնակիցների՝ Բանկին տրամադրած էլ. փոստի հասցեին արշավի ամփոփման ժամանակ: Ընդ որում, մեկից ավել հաջողված ուղղորդման դեպքում Հրավիրողը ստանում է պրոմո կոդ յուրաքանչյուր հաջողված ուղղորդման մասով: Վիճակահանությունն ամփոփվելու է օգոստոսի 26-ին ուղիղ հեռարձակման միջոցով:[1]
2. Արշավի պայմանները կիրառելի են, եթե պահպանված են ստորև պահանջները.
    - Հրավիրողը պետք է հրավերն ուղարկած լինի առավելագույնը մինչև օգոստոսի 21-ը ներառյալ,
    - Հրավիրվողը Բանկի հաճախորդ պետք է դառնա և պատվիրի **Mastercard Standard** հեռավար եղանակով՝ հրավերի արդյունքում գրանցվելով SMS հաղորդագրությամբ ստացված հղմամբ,
    - Հրավիրվողը պետք է Բանկի հաճախորդ դառնա և պատվիրի Mastercard Standard տեսակի քարտ 2026թ. թվականի հուլիսի 17-ից մինչև 2026թ. օգոստոսի 21-ը ներառյալ,
    - Խրախուսման վճարի ստացման համար հրավիրողը պետք է ունենա 5 և ավել հաջողված ուղղորդում, եթե հաջողված հրավերների քանակը փոքր է 5-ից, ապա խրախուսման վճար չի տրամադրվում
    - Արշավի ամփոփման պահին՝ **օգոստոսի 26-ի դրությամբ**, հրավիրողը և հրավիրվողը պետք է հանդիսանան Բանկի հաշվետեր հաճախորդ,
    - Հրավիրվողը չպետք է լինի **2025թ. հունիսի 1-ից** հետո փակված և արշավի շրջանակում վերաբացված հաճախորդ:

[1] Վիճակահանության ուղիղ հեռարձակման հղումը մասնակիցները կստանան էլ. փոստի միջոցով

«Ամերիաբանկ» ՓԲԸ
+(37410) 561111, +(37412) 561111, office@ameriabank.am

Հավելված 17
Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմանների

Հրավիրիր ընկերոջդ

Ընդունվել է Բանկի Տնօրինության 10.10.2024թ. թիվ 01/148/24 որոշմամբ,
սույն խմբագրությունը՝ 24.12.2025թ. թիվ 01/33/25 որոշմամբ, և ուժի մեջ է 16.03.2026թ-ից:

1. Սահմանումներ

1.1. **Ուղղորդում՝ Բանկի** ծառայություններից օգտվելու նպատակով անմիջապես **Ուղղորդող անձի** կողմից կամ **Բանկի** կողմից **Ուղղորդող անձի** անունից **Ուղղորդվող անձին** հրավերի ուղարկում, որը կարող է իրականացվել **Բանկի Հեռավար սպասարկման համակարգում** հասանելի եղանակով **Ուղղորդման հղում** պարունակող հաղորդագրություն ուղարկելու միջոցով, այդ թվում՝ **Ուղղորդող անձի** կողմից **Ուղղորդվող անձի** կոնտակտային տվյալները Բանկին տրամադրմամբ/**Հեռավար սպասարկման համակարգ** ներմուծմամբ:

1.2. **Ուղղորդող անձ՝** Բանկի **Հաճախորդը**, ով իրականացրել է **Ուղղորդում**:

1.3. **Ուղղորդվող անձ**՝ ֆիզիկական անձ, ով ստացել է **Ուղղորդման հղում** պարունակող հաղորդագրություն**:**

1.4. **Ուղղորդման հղում՝** ունիկալ մեկանգամյա օգտագործման հղում, որը **Բանկին** հնարավորություն է տալիս փաստել, որ տվյալ **Ուղղորդվող անձը Բանկի** ծառայություններից օգտվելու համար դիմել է որոշակի **Ուղղորդող անձի** կողմից **Ուղղորդման** արդյունքում:

2. Ուղղորդման ծրագրի պայմաններ

2.1. Սույն **Հավելվածը** սահմանում է Բանկի «Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագրի (այսուհետ՝ **Ուղղորդման ծրագիր**) պայմանները:

2.2. **Ուղղորդման ծրագրին** մասնակցելու համար **Ուղղորդող անձը** իրականացնում է **Ուղղորդում**:

2.3. **Ուղղորդող անձը**, **Ուղղորդման ծրագրին** մասնակցելով, համաձայնում է, որ **Ուղղորդվող անձին** հասանելի դառնա **Ուղղորդող անձի՝ Բանկի** հաճախորդ լինելու փաստը:

2.4. **Ուղղորդման ծրագրին** մասնակցելու համար **Ուղղորդվող անձը** պետք է անցնի հաղորդագրության մեջ նշված **Ուղղորդման հղումով,** իրականացնի պահանջվող գործողությունները՝ տվյալ **Ուղղորդման ծրագրով** առաջարկվող **Ծառայությունը** ստանալու համար: Բանկի կողմից կարող են սահմանվել **Ուղղորդման ծրագրին** մասնակցության հավելյալ պայմաններ: **Ուղղորդումը** համարվում է հաջողված, եթե **Ուղղորդվող անձը** սույն կետում նշված գործողությունների արդյունքում ստանում է **Ուղղորդման ծրագրով** առաջարկվող **Ծառայությունը**, և/կամ տեղի են ունենում **Բանկի** կողմից սահմանված՝ **Ուղղորդումը** հաջողված համարվելու այլ պայմանները (առկայության դեպքում):

2.5. **Ուղղորդվող անձը, Ուղղորդման ծրագրին** մասնակցելով, համաձայնում է, որ **Բանկի** հաճախորդ դառնալու դեպքում՝ **Ուղղորդող անձին** հասանելի դառնա **Ուղղորդվող անձի՝ Բանկի** հաճախորդ լինելու փաստը:

2.6. **Բանկի** կողմից **Ուղղորդման հղման** համար կարող է սահմանվել վավերականության ժամկետ:

2.7. **Բանկի** կողմից իրականացվող արշավների, միջոցառումների և/կամ այլ հատուկ առաջարկների շրջանակներում Բանկի **Հաճախորդների** ներգրավումը քաջալերելու, **Ծառայությունների** վաճառքն ընդլայնելու նկատառումներից ելնելով **Ուղղորդման ծրագրի** ներքո հաջողված **Ուղղորդման** դիմաց կարող են սահմանվել խրախուսանքի միջոցներ՝ դրամական վճարումների, զեղչերի և/կամ այլ հավելյալ հնարավորությունների

տեսքով: Խրախուսանքի միջոցները, դրանց չափերը և տրամադրման կարգը սահմանվում են **Բանկի** կողմից իրականացվող արշավների, միջոցառումների և/կամ այլ հատուկ առաջարկների պայմաններով:

2.8. **Ուղղորդումը Բանկի** համար չի առաջացնում **Ուղղորդվող անձին Ծառայության** մատուցման պարտավորություն, քանի որ **Բանկը Ծառայություններ** մատուցում է **Օրենսդրությամբ** և **Բանկի** ներքին իրավական ակտերով ամրագրված պահանջների պահպանման դեպքում: